



Primacy of the Armenian Apostolic Orthodox Church  
of the United Kingdom and Republic of Ireland

His Grace Bishop Hovakim Manukyan, Primate

## Saint Yeghiche Armenian Church Parish Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծով

Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan

13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB

Registered Charity No 1173403

Pastoral office t. +44 (0)20 7373 8133 email. [info@styeghiche.org.uk](mailto:info@styeghiche.org.uk)  
[www.styeghiche.org.uk](http://www.styeghiche.org.uk) <https://www.facebook.com/StYeghiche>

## SUNDAY BULLETIN

1: Today's Scripture Reading,

5th July 2020

Bulletin 27/2020

### **Fifth Sunday after Pentecost, Feast of the Discovery of the Box of the Theotokos**

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ ՀՈՌՄԷԱՑԻՆԵՐԻՆ ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ 9 :30 -10:4**

Ուրեմն ի՞նչ ըսենք: Հետեւեա՛լը, թէ հերթանոսները՝ որոնք հետամուտ չէին արդարութեան՝ հասան արդարութեան, այն արդարութեան՝ որ հաւատքէն է. իսկ Իսրայէլ՝ որ հետամուտ էր արդարութեան Օրէնքին՝ չհասաւ արդարութեան Օրէնքին: Ինչո՞ւ. որովհետեւ ուզեց արդարանալ ո՛չ թէ հաւատքով, հապա որպէս թէ Օրէնքին գործերով: Արդարեւ անոնք գայթեցան սայթաքումի քարին վրայ,

ինչպէս գրուած է. «Ահա՛ Սիոնի մէջ կը դնեմ սայթաքումի քար մը ու գայթակողութեան ժայռ մը, եւ ո՛վ որ հաւատայ անոր՝ ամօթահար պիտի չլլայ»:

Եղբայրներ, սիրտիս բաղձանքն է, նաեւ Աստուծոյ ուղղած աղերսանքս՝ Իսրայէլի համար, որ անոնք փրկուին: Որովհետեւ ես անոնց համար կը վկայեմ թէ նախանձախնդրութիւն ունին Աստուծոյ հանդէպ, բայց ո՛չ թէ գիտակցութեամբ: Քանի որ՝ անգիտանալով Աստուծոյ արդարութիւնը եւ ջանալով հաստատել իրենց արդարութիւնը՝ անոնք չպատակեցան Աստուծոյ արդարութեան: Որովհետեւ Քրիստո՛ս է Օրէնքին վախճանը՝ ամէն հաւատացեալի արդարութեան համար:

### **The Epistle of St Paul to the Romans 9:30-10:4; Israel's Unbelief**

What then shall we say? That the Gentiles, who did not pursue righteousness, have obtained it, a righteousness that is by faith; but the people of Israel, who pursued the law as the way of righteousness, have not attained their goal. Why not? Because they pursued it not by faith but as if it were by works. They stumbled over the stumbling stone.

As it is written: "See, I lay in Zion a stone that causes people to stumble and a rock that makes them fall, and the one who believes in him will never be put to shame." <sup>m</sup>

Brothers and sisters, my heart's desire and prayer to God for the Israelites is that they may be saved. For I can testify about them that they are zealous for God, but their zeal is not based on knowledge. Since they did not know the righteousness of God and sought to establish their own, they did not submit to God's righteousness. Christ is the culmination of the law so that there may be righteousness for everyone who believes.

### **ՅԻՍՈՒՄ ԲՐԻՍՏՈՍԻ ԱԷԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ 13:24-30**

Ուրիշ առակ մըն ալ առաջարկեց անոնց ու ըսաւ. «Երկինքի թագաւորութիւնը նմանեցաւ մարդու մը, որ իր արտին մէջ լաւ սերմ ցանեց: Մինչ մարդիկ կը քնանային՝ իր թշնամին եկաւ, որոն ցանեց ցորենին մէջ եւ գնաց: Երբ խոտը ծաղկեցաւ ու պտուղ բերաւ, այն ատեն որոմն ալ երևցաւ:

### **Our Aim;**

St Yeghiche Armenian Church aims to be the church for the whole community; a place where those who have faith and those who yet to find it or renew it, can come together as a family of God's children; a place where all will be received with tolerance, understanding and friendship.

## 2: A short interpretation of the Scripture reading

Ուստի հողատիրոջ ծառաները մօտեցան եւ ըսին անոր. “Տէ՛ր, դուն լաւ սերմ չցանեցի՞ր արտիդ մէջ. ուրեմն որո՞ւմ ուրկէ՞ է”: Ան ալ ըսաւ անոնց. “Թշնամի մը ըրած է ապիկա”: Ծառաները ըսին իրեն. “Ուստի կ’ուզե՛ս որ երթանք ու քաղենք զանոնք”: Իսկ ան ըսաւ. “Ո՛չ, որպէսզի երբ որոմը քաղէք՝ ցորենն ալ չփրցնէք անոր հետ: Թո՛յլ տուէք որ երկուքն ալ միասին աճին՝ մինչեւ հունձքի ատենը”: Եւ հունձքի ատենը պիտի ըսեմ հնձողներուն. “Նախ որո՞մը քաղեցէք ու խուրձ-խուրձ կապեցէ՛ք՝ այրելու համար, իսկ ցորենը ժողվեցէ՛ք իմ ամբարս”»:

### The Holy Gospel of Jesus Christ according to Matthew 13 :24-30

#### The Parable of the Weeds

Jesus told them another parable: “The kingdom of heaven is like a man who sowed good seed in his field. But while everyone was sleeping, his enemy came and sowed weeds among the wheat, and went away. When the wheat sprouted and formed heads, then the weeds also appeared.

“The owner’s servants came to him and said, ‘Sir, didn’t you sow good seed in your field? Where then did the weeds come from?’

“‘An enemy did this,’ he replied.

“The servants asked him, ‘Do you want us to go and pull them up?’

“‘No,’ he answered, ‘because while you are pulling the weeds, you may uproot the wheat with them. Let both grow together until the harvest. At that time I will tell the harvesters: First collect the weeds and tie them in bundles to be burned; then gather the wheat and bring it into my barn.’”



Parable of the Sower

### Ս. Տրդատ թագավորի, Աշխեն թագուհու և Խոսրովիդուխտ կույսի հիշատակության օր

Հայոց Արշակունյաց Տրդատ արքան առաջինն էր աշխարհում, որ 301 թվականին քրիստոնեությունն ընդունեց երկրի պետական կրոն՝ դառնալով քրիստոնեության տարածման մեծագույն ջատագով Հայաստանում: Նրա անվան կողքին պատմությունը հիշատակում է նաև Աշխեն թագուհու և թագավորաբույր Խոսրովիդուխտ կույսի անունները: Խոսրովիդուխտի երագի շնորհիվ է, որ Խոր Վիրապի բանտարկությունից դուրս է գալիս Ս. Գրիգոր Լուսավորիչը և Քրիստոսի լույսը տարածում Հայոց աշխարհում: Ինչպես վկայում է Ագաթանգեղոսը, արքայի հետ մեկտեղ արքունի երկու տիկնայք ընդառաջ են գալիս Կեսարիայից հայրենիք վերադարձող Ս. Գրիգոր Լուսավորչին ու ձեռամբ առաջին քահանայապետի մկրտվում Արածանիի ջրերում: Հետագայում հայոց արքան ու թագուհին և բարեպաշտ Խոսրովիդուխտն անձամբ մասնակցում են Ս. Էջմիածնի կառուցմանը:

### Commemoration of Sts. Tiridates, King of Armenia, Queen Ashkhen and Princess Khosrovidoukht

In 287 A.D. Tiridates (Trdat), from the royal house of Arshakouni, assumes the throne which once belonged to his father and becomes Tiridates III, King of Armenia. His name is inextricably linked with the Patron Saint of the Armenian Church, St. Gregory the Illuminator. In 301 A.D. the king releases the Christian Gregory from imprisonment and proclaims Christianity to be the State Religion of Armenia. In doing so, the king becomes the greatest advocate of spreading Christianity throughout the country.

The names of Queen Ashkhen and the King’s sister, Khosrovidoukht are closely related to the Great Conversion of Armenia as well. Princess Khosrovidoukht’s vision of a cure for the King’s incurable illness causes St. Gregory the Illuminator to be liberated from the dungeon of the deep pit. Gregory then is free to begin the process of spreading the light of Christianity, which is the Gospel of Jesus Christ.

According to Greek historian Agathangelos, the King, the Queen and the Princess meet St. Gregory upon his return from Caesarea, to where he had traveled to receive episcopal ordination. Following a period of fasting and preparation, Gregory baptizes the three of them. They are followed by the baptism of the royal court and the nobles of Armenia. Through the baptism by Gregory, Tiridates becomes the first king in the world to rule over a Christian country. History also reveals that Tiridates, Ashkhen and Khosrovidoukht personally participate in the construction of the Cathedral of Holy Etchmiadzin. The stones they used to build the cathedral were brought to Vagharshapat from the slopes of Biblical Mount Ararat.

### 3: This weeks message from our Priest in Charge

#### Մեկնություն եւ պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցուածից.

Յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն.

*«Արդ, ո՛վ պիտի բաժանի մեզ Քրիստոսի սիրուց. տառապա՞նքը, թե՛ անձկութիւնը, թե՛ հալածանքը, թե՛ սովը, թե՛ մերկութիւնը, թե՛ վտանգները, թե՛ սուրբ...» (Հռոմ.8:35):*

Աստուածասէր եղբայրներ եւ քոյրեր,

Աստծոյ Խօսքը՝ Սուրբ Գիրքը, հոգեւոր կերակուր է իւրաքանչիւր քրիստոնէայի համար, որով ամէն օր զօրանում ենք դէպի երկինք մեր հոգեւոր ճամփորդութեան համար: Բոլոր ժամանակների քրիստոնէաների համար կարելու է Աւետարանի խօսքը իրենց կենցաղ բերելու, ժամանակակից կեանքի իրավիճակներ հետ համեմատելու խնդիրը:

Այսօրուայ ընթերցումը եւս այս խոկումի առաջ է կանգնեցնում հաւատացեալ հոգուն: Թւում է՝ վաղուց արդէն անցեալում են Քրիստոսին դաւանելու համար ֆիզիկական տանջանքների եւ հալածանքների ենթարկուելը, բանտերի, մերկութեան ու սովի մատնուելը: Հետեւաբար կարո՞ղ ենք ապահովաբար ասել, որ մեր յարաբերութիւնները Քրիստոսի հետ կատարեալ միութեան մէջ են: Յաւ ի սիրտ պիտի արձանագրենք, որ մեր պարզ ինքնաքննութեան մէջ անգամ յաճախ կարող ենք տեսնել, որ առանց բռնութեան եւ հալածանքի էլ մենք Քրիստոսի հետ միութեան մէջ չենք: Աւելին, 1-ին դարի քրիստոնէաները հալածանքի մէջ աւելի զօրեղ հաւատքի օրինակներ են ցոյց տուել՝ վկայելով, որ իրենց համար կեանքից թանկ է Աստծոյ սէրն ունենալը:

Ուրեմն, ի՞նչն է այսօրուայ, մեր ժամանակների քրիստոնէայի հոգեւոր սառնութեան եւ Քրիստոսից բաժանումի հիմքը: Ի վերջոյ, ո՞վ է ուզում բաժանել մեզ Քրիստոսից եւ Իր սիրուց: Փաստ է, որ մեր ժամանակներում գնալով աւելի ու աւելի է զգացւում հոգեւոր ճգնաժամը: Պատանիների եւ երիտասարդների միջավայրերում աւելի զօրաւոր են դառնում աստուածամերժ ուսուցիչների եւ հասարակութեան ազդեցութիւնը, արեւիստական եւ նիւթապաշտական մօտեցումները: Մեր ժամանակի մարդն այլեւս չի ուզում շատ ժամանակ տալ Աստծոյ հետ հարաբերութեանը, Աստծոյ հետ խօսելուն, աղօթելուն, խոկալուն՝ չանդրադառնալով, որ դա իրեն է պետք եւ ոչ Աստծուն: Թւում է, թէ ժամանակն է քիչ, այնինչ պատրաստ ենք օրերով ու ժամերով հետեւել երեւակայական պատմութիւնների հիմքով նկարահանուած ֆիլմերին եւ սերիալներին: Մարդ իր յաւիտենական հոգին մսխում է ժամանակաւոր եւ անարժէք երեւոյթների վրայ՝ փրկութեան համար քիչ հոգ տանելով կամ ընդհանրապէս անտեսելով:

Քրիստոսի սիրուց բաժանումը կարող է լինել ե՛ւ ֆիզիկական պատճառներով՝ տառապանք, հալածանք, սով, մերկութիւն, սուր, ե՛ւ հոգեւոր-մտաւոր առումներով՝ անտարբերութիւն, հպարտութիւն, նախանձ, ծուլութիւն...

Այս աշխարհը հոգեւոր պատերազմի թատերաբեմ է, ուր մարդիկ իրենց ազատ կամքով պիտի ընտրեն Արարիչ ու Փրկիչ Աստծուն, կամ բանասարկու եւ մեր փրկութեան թշնամի սատանային: Աստծոյ եւ մարդութեան թշնամին միշտ աւելի դուրեկան եւ ցանկալից խայծերով է հրապուրում մարդկանց՝ հնարաւոր բոլոր կերպերով մարդուն հեռացնելով Աստծուց եւ աղօթական խոկումից:

Քրիստոս հոգեւոր շատ խնդիրներ եւ դրանց լուծումները առականերով է տեսանելի դարձնում: Այսօրուայ աւետարանական ընթերցուածի մէջ Յիսուս պատմում է Աստծոյ արքայութեան այն օրինակի մասին, որ արատահայտուում է բարի սերմ ցանող մարդու եւ թաքուն, ծածկապէս որոմ ցանող թշնամու կերպարներով: Որքան էլ աշխարհը փոխուել է, այս սերմնացանութիւնը նոյնն է մնացել, քանի որ այս առակում սերմերը մարդիկ են՝ բարի կամ չար, արքայութեան որդիներ կամ չարի որդիներ: Ինքը՝ Փրկիչն է մեկնաբանել այս առակը աշակերտների խնդրանքով, ուր արտն այս աշխարհն է, բարի սերմերը արքայութեան որդիներն են, իսկ որոմը՝ չարի: Բանի դեռ հունձը չի եղել, այս երկու սերմերը միասին են՝ փոխազդելով իրար վրայ, չարից բարի եւ բարիից չար դառնալու հաւանականութիւնն աչքի առաջ ունենալով: Եւ քանի դեռ հունձը, որ այս աշխարհի վախճանն է, չի հասել, չպիտի թմրենք ու քնի տրուենք, որ պատճառ է դառնում, որ Աստծոյ Որդու ցանած բարի սերմի մէջ ծածուկ կերպով չար սերմ աւելանայ: *«Մարդու Որդին կ'ուղարկի իր հրեշտակներին, եւ նրանք կը հաւաքեն նրա արքայութիւնից բոլոր գայթակղութիւնները եւ նրանց, որոնք անօրինութիւն են գործում»* (Մատթ. 13:41):

1. Աղօթքով խնդրել Քրիստոսից իմաստութիւն՝ բաց պահելու հոգու աչքերը եւ հասկանալու Աստծոյ խօսքի թաքուն, ծածկուած իմաստը («Ով լսելու ականջ ունի, թող լսի»)

2. Ապահով եւ ինքնավստահ չզգալ լաւ սկիզբով, այլ զգօն եւ արթուն լինել՝ աչքի առաջ ունենալով սայթաքող առաքեալին եւ փրկուող աւագակին («ահուդողով դուք ձեր փրկութեան համար աշխատէ՛ք» (Փիլիպ.2:12)):

3. Հնձի տէրը Քրիստոս է, Իր եւ Իր հրեշտակների համար մենք ճանաչելի ենք մեր սիրող սրտով՝ բարի՝ սերմ ենք, թե՛ չար: Չանք պետք է թափենք, որ որոմը չը վարակի մեզ եւ այլոց:



4. Յիշել, որ Աստուած սեր է, սիրով է ճանաչելի մեզ եւ մենք ենք սիրով ճանաչելի Իր համար: Դրա համար Աստծոյ հետ յարաբերութիւնը հաւատքից առաւել հիմնուած է սիրոյ վրայ, եւ մենք, ըստ գլխաւոր պատուիրանի, պիտի սիրենք Աստծուն մեր ամբողջ սրտով, ամբողջ հոգով, ամբողջ մտքով եւ ամբողջ զօրութեամբ (Մարկ. 12:30):

5. Համայնքային կեանքի մէջ արտայայտենք այդ ապրումը՝ սիրելով այլոց եւ փոխադարձաբար վայելելով նրանց սերը, քանի միմեանց նկատմամբ սիրոյ մէջ է ներկայ Աստուած:

Քրիստոս անձամբ որեւէ գիրք չը գրեց, որեւէ շինութիւն կամ նիւթական որեւէ փոխանցելիք միջոց չը թողեց առաքեալներին եւ մեզ: Քրիստոս մեզ Իրեն տուեց՝ ի դէմս Սուրբ Հոգով շարժուող Իր Եկեղեցու, ուր մշտապէս ներկայ է սուրբ Մեղանին բազմած Աստուած, ուր Հոգու շնորհներն են բաշխուում, ուր աշխարհի եւ մեղքի մրից սեւացած հոգիներն զոյգումով հրեշտակային սպիտակութիւն են հագնում եւ արժանանում կկէանչափելիորէն առատ կերպով է հեղուում:

Բովանդակ սրտով Աստծուն սիրողը կը սիրի նաեւ իր մերձաւորին, ընկերոջը, եղբորը: Միասին, միմեանց համար աղօթքով եւ միմեանց սատարելով Քրիստոսին աւելի ու աւելի մեր մէջ ունենանք՝ Իրենով յաղթելու այն փորձութիւններում, որոնք կեանքի պարտադիր պայմաններից են :

*«Բայց այս բոլորից էլ աւելի յաղթական ենք դուրս գալիս նրա միջոցով, ով սիրեց մեզ. որովհետեւ վատահ եմ, թէ ո՛չ մահր, ո՛չ կեանքը, ո՛չ հրեշտակները, ո՛չ իշխանութիւնները, ո՛չ այլ բաներ, որ այժմ կան, ո՛չ գալիքները եւ ո՛չ զօրութիւնները, ո՛չ բարձրութիւն, ո՛չ խորութիւն եւ ո՛չ մի ուրիշ արարած չի կարող բաժանել մեզ Աստծու այդ սիրուց, որ կայ մեր Տէր Քրիստոս Յիսուսով»* (Հռոմ.8:37-39):

Մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհը, Աստծու սերը եւ Սուրբ Հոգու հաղորդութիւնը ձեզ հետ լինեն: Ամէն:

**Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան**

## Սուրբ Աստվածածնի տուփի գյուտի տոն

Ավանդության համաձայն՝ Ս. Աստվածածնի տուփը, որտեղ պահվել է Տիրամոր գլխանոցը, հայտնաբերել են երկու հույն իշխաններ, որոնք Երուսաղեմ ուխտի գնալիս Գալիլիայում մի հրեա կնոջ մոտ տեսնում են տուփը, որի զորութեամբ հիվանդներ էին բժշկվում: Տուփը փոխելով իր կրկնօրինակով՝ երիտասարդներն այն բերում են Կ. Պոլիս և հանձնում պատրիարքին: Պատրիարքը տուփը զետեղում է Ս. Աստվածածին եկեղեցում և հաստատում Ս. Աստվածածնի տուփի գյուտի տոնը:

Այս տոնը Հայ Առաքելական Եկեղեցին սկսել է տոնել 18-րդ դարից՝ Սիմեոն Երևանցի կաթողիկոսի կարգադրությամբ:

## Feast of the Discovery of St. Mary's Box

According to tradition, while on route to Jerusalem on a pilgrimage, two Greek princes come across a chest that once belonged to St. Mary. In Galilee, they see a large crowd gathered in front of a Jewish woman's house. They inquire and find that the sick are being healed due to the inexplicable power of the chest. The princes bring the box to Constantinople and present it to the Patriarch, who places it in the Church of St. Mary. The Patriarch then establishes the Feast of the Discovery of St. Mary's Box.

The Armenian Church celebrates this feast upon the order of the Catholicos Simeon from Yerevan, who accepted this tradition from the Greek Orthodox Church in the late 18th century.



## Երիտասարդի դարձը (բարոյախրատական պատում)

Մի երիտասարդ գիշեր-ցերեկ ուտել-խմելով էր անցկացնում իր տարիները: Մի օր էլ իր չար բախտից ծանորդներն հիվանդանում է և մնում մինչև իր կյանքը վերջը անդամալույծ, նույնիսկ անկարող շարժվելու: Խղճալի վիճակ:

Իր մոտ մարդկանցից մեկը, առանց իմանալու, թե հիվանդը զոջացել է և Աստծուն դարձել, փորձում է իր ցավը հայտնել նրա տառապալից վիճակի համար:

«Շատ գոհ եմ այս հաշմանդամ վիճակիցս», - մտորում է հիվանդը: «Առաջ, երբ ուտել-խմելով էի զբաղված, բաց էին Ֆիզիկական աչքերս, բայց երբեք էլ չէի նկատում երկինքը: Իսկ հիմա այս տառապանքիս ու դժվարությանս մեջ, սովորեցի նայել դեպի վեր, դեպի Աստված և աչքերս մշտապես պահել Փրկչիս և Աստծու վրա, որն ինձ համբերություն է տալիս դիմանալու ու հույս ունենալու լավագույն մի կյանքի, կյանք, որն ինձ սպասում է Տիրոջ Թագավորության մեջ»:

Երիտասարդներ թող այս տղայի վիճակը ձեզ դաս լինի: Քանի երիտասարդ եք թվում է, թե «ծովը ձեր ծնկներից է», ինչ ուզում եք այն էլ անում եք, շատ անգամներ ի վնաս ձեզ և մանավանդ ձեր սիրասուն ծնողների:

**Գրառեց Տէր Հովսէփ քահանա Հակոբյանը**

## Why should I support my Church?

The following is addressed to every member of our community

There is a prevailing view that rich benefactors and trusts will continue to support the Church and give the necessary monies to cover all its needs and activities. That might have been true at one time, but no longer as the community has grown to its size: the church needs continuous, dependable and consistent regular income from more sources.

Our clergy always stress to us that the church is not just the building, the clergy and the church services: it exists and thrives only through its congregations. **Therefore, your participation and support is vital, not only by attending the church but also with your time and financial contribution to the church, without believing complacently that a few wealthy donors can be called on.** The church needs all its adherents and should not be restricted to such a small set of active people.

**So when you enter a church for a service expecting the doors to be open, the building to be lit up and heated, a priest at the altar with deacons, candles in the vestry, a choir and organist performing - think of what it takes to make all this happen. We must not take all this for granted.**

### How can you help?

**Firstly**, please become a registered parishioner, the Church will appreciate the generosity of your regular dues. Small annual amounts by many add up to a worthwhile level. The income from weddings and baptisms is not the reliable basis for sustained parish activities.

**Become an annual dues paying member,  
Take part in parish activities,  
Let your voice be heard,  
Be eligible to vote and  
Be elected to one of Parish offices.**

**Secondly**, consider giving additional donations to sustain a thriving church in all its aspects. Do not just dip in and out of the church when you come expecting others to provide – you are an important member of the church too.

**This is an issue for all the community and should not be avoided.**

**Thank You**

### To Register

Please ask St Yeghiche Church office for a copy of an application form, or visit <https://www.styeghiche.org.uk/sacraments/forms-2/members-registration-form/>

### To Donate

- By Bank transfer to  
St Yeghiche Armenian Church Parish Ltd  
Account at: HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26

**OR**

- By cheque to  
“St Yeghiche Armenian Church”,  
13b Cranley Gardens, Kensington, London, SW7 3BB.

## **WE ARE LIVE STREAMING,**

During this pandemic we urge all of our community members to stay safe and continue to follow the Government directives and recommendations. We have passed the hurdle and very soon will be allowed to meet up and resume our daily lives.

In the meantime we are continuing our spiritual services by offering the Sunday Divine Liturgy service by live streaming it via our Facebook page at [www.facebook.com/StYeghiche](https://www.facebook.com/StYeghiche) or via the web at <https://www.facebook.com/StYeghiche> .

**Thank you,**

**St Yeghiche Armenian Church Parish Council**



3<sup>rd</sup> July 2020

Dear Parish and community member

### Restoration of Church Services

We are pleased to inform you that St Yeghiche Church will open its doors for public worship from Sunday 5<sup>th</sup> July 2020. We will also continue with live streaming where possible. This is follow on from the Government announcement that church buildings will be able to reopen for public worship from 4<sup>th</sup> July 2020, providing physical distancing remains in place.

This is not a return to normality but at least we will now be able to meet and worship together in our church buildings. As well as Divine Liturgy, we can now conduct weddings, baptisms, funerals, and other services, admittedly with some restrictions.

The faithful is reminded that perfect solutions do not exist for this unprecedented challenge that this pandemic presents to us as a Parish and Diocese. Therefore it remains the individual decision of each faithful member and (or) household to weigh the benefits and blessings to themselves and their families of gradually returning to Church against the risks inherent in any public activity, in the midst of our current situation.

Keeping our Parishioners and Church servers safe has always been our priority, and that is more important than ever during the Coronavirus pandemic. To this end a number of safety measures have been put in place, listed below, which we expect you to follow.

***Individuals who are shielding should continue to follow the government's advice on shielding.***

***The clinically vulnerable and extremely clinically vulnerable individuals are advised not to attend worship places however this is advisory, and they can choose how to manage their own risks.***

***No person belonging to a high-risk group or feeling unwell in any way should participate in any Church activities or attend Church.***

***Certain groups of people may be at increased risk of severe disease, including people who are aged 70 or older, regardless of medical conditions. Individuals who fall within this group are advised to stay at home as much as possible and, if they do go out, to take particular care to minimise contact with others outside of their household.***

1. There will be single entrance door and a single exit door.
2. Use Hand sanitiser gel and wipes located near the entrance and exit doors. Wash hands thoroughly using soap and water.
3. Avoid contact with frequently touched surfaces, such as door handles and rails.
4. Follow the one-way flow signs inside the Church.
5. Adhere to social distancing of 2m at all times.

6. Only use the nominated seats.
7. Avoid touching or kissing objects that are handled communally.
8. You are encouraged to wear your own coverings and veils.
9. Liturgy books will not be available, bring your own or use digital versions.
10. Parents must exercise particular caution and must supervise their children, ensuring that they do not come into contact with other people.
11. Only sing along in a whisper to minimise any possible transmission of disease.
12. The Kiss of Peace is to be conducted by bowing the head toward others, without approaching or touching them.
13. Holy Communion is distributed in accordance with the directive of His Holiness KAREKIN II, this will be done at the end of BADARAK. Note that taking the communion is a private matter, those who feel that they are ready to take it however must appreciate the risks involved.
14. Please provide your contact details to the Parish council. The parish will be maintaining an accurate temporary record of congregation attending, for 21 days, this is to assist NHS Test and Trace with requests for that data if needed for contact tracing and the investigation of local outbreaks.
15. Congregation is encouraged to make their donations electronically. Where this is not an option, cash should be placed in the appropriate plate.
16. Traditional coffee hour/fellowship will not take place.

We look forward to welcoming you.

**St Yeghiche Parish Council**

### 3: Հոգեհանգիստ - Memorial Service

Repose of the soul service at St Yeghiche Armenian Church is requested:

By Mrs Nouritza Matossian, Hagop and Vahakn Gehlhaar for the soul of their Husband and father the late ROLF GEHLHAAR on the 1<sup>st</sup> anniversary memorial of his passing, also for all the old and new deceased members of the GEHLHAAR and MATOSSIAN Families.

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

**Support Your Parish:** We encourage our faithful during this pandemic to keep safe and remember our church in their daily prayers, and support by either making online donation or setting a direct debit through their bank. Details of our bank account is here below:

**St Yeghiche Armenian Church Parish Ltd**

Account at: HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26,

IBAN: GB13HBUK40022642674432, BIC: HBUKGB4106F

Thank you in advance, St Yeghiche Armenian Church Parish Council

**Please Pray For Our Sick:** Please notify the Pastor whenever you know of anyone who is sick, whether at home or in the hospital. Let us pray for one another

**Rev Fr Nshan Alaverdyan** is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan at 07548 777 147.

Ձեր ամեն տեսակի հոգեւոր կարիքներուն եւ Խորհրդակատարութիւններուն՝ Տնօրինէի, հիւանդի այցելութեան, Սբ Հաղորդութեան ստանալու եւ այլ խնդրանքներուն համար դիմեցէք Եկեղեցի 020 7373 8133, կամ ուղղակի հեռաձայնեցէք **Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեանին** 07548 777 147:

### ENQUIRIES:

For ecclesiastical/parish matters including requests for Christenings, Home Blessing (Dnorhnek), Donations in Lieu of Flowers, arrangements for Marriages and other church administrative matters please contact Mr Viken Haladjian, phone: **07970 146 280** or **020 7373 8133** or by emailing [info@styeghiche.org.uk](mailto:info@styeghiche.org.uk)  
Alternatively please approach a member of the Parish Council at church every Sunday after Badarak.

### Requiem Service (Hokehankisd)

For Requiem Service (Hokehankisd), please call the church office at **020 7373 8133**, or e-mail us your request to [info@styeghiche.org.uk](mailto:info@styeghiche.org.uk) by Thursday, in order to include the name(s) of your beloved one(s) in the Sunday bulletin. There is no set monetary amount for requesting Hokehankisd; any amount donated is appropriate and appreciated. **Please remember our Church in your prayers.** *Your kind donations are gratefully accepted.*

### ANNOUNCEMENT:

St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to become registered members and take part in Parish activities. Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices. Please contact a member of the Parish Council at the side entrance desk of the Church or visit our website [www.styeghiche.org.uk](http://www.styeghiche.org.uk)

St Yeghiche Parish Council appeals to all members for **prompt** payment of their **annual membership dues and generous donations**, thus saving your parish administrative and postage costs.

Please hand in your membership dues and donations to the members of the Parish Council at the side entrance desk of the Church. Alternatively please post your cheque to: St Yeghiche Armenian Church Parish, *13b Cranley Gardens, Kensington, London, SW7 3BB*. Please make your cheques pay-able to: **“St Yeghiche Armenian Church”**. You can also pay by bank transfer to St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at: HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26, IBAN: GB13HBUK40022642674432, BIC: HBUKGB4106F

St Yeghiche Armenian Church is a Registered Charity, Reg No 1173403. Please complete a Gift Aid Form with your donation. Forms are available from Parish Council.